ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ.** (374281) 2 25 22

,, _____,, ,,_____,, **2023թ** N _____

«ՀԵՏՔ» ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԹԵՐԹԻ

ԼՐԱԳՐՈՂ Տ. ՄՈՒՇԵՂՅԱՆԻՆ

/**Հասցե՝ Ք. Երևան** 0010 **Բյուզանդի փ. 1/3**, 8-**րդ հարկ** ,**էլ. փոստ՝** trdat.musheghyan@hetg.am /

Հարգելի պարոն Մուշեղյան

Ի պատասխան Ձեր 07.03.2023թ. գրության՝ հայտնում ենք, որ նախագծային հիմքով կառուցված կոյուղի ունեն միայն մարզի երեք քաղաքային համայնքները, Ջերմուկ համայնքի Կեչուտ և Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրերը: Մնացած բնակավայրերում որպես այդպիսի ենթակառուցվածք գոյություն չունի: Կառուցվում է Եղեգնաձոր քաղաքի Նոր Ավան թաղամասի կոյուղու ցանց և բիոմաքրման կայան:

Ջերմուկ քաղաքը ունի կեղտաջրերի մաքրման կայան՝ Ջերմուկ «ԿՄԿ»: Մարզում կեղտաջրերի այլ մաքրման կայաններ չեն գործում:

Միաժամանակ հայտնում ենք, որ 2022 թվականից կատարվել են մեծածավալ աշխատանքներ գոյություն ունեցող կոյուղագծերի գույքագրման, նախագծային ավելացումների և ոչ նախագծային /բնակիչների կողմից/ միացումների քարտեզագրման և գործողության սխեմաների հստակեցման ուղղությամբ:

Զուգահեռ աշխատանքներ են տարվում մյուս քաղաքային համայնքներում կեղտաջրերի մաքրման կայաններ կառուցելու ուղղությամբ: Ճշգրտվում են կեղտաջրերի մաքրման կայանների անհրաժեշտ հզորությունները և դրանց

կառուցման ֆինանսական միջոցների աղբյուները, այդ թվում սուբվենցիոն ծրագրերի միջոցով:

3/14/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Գ. Հարությունյան
Քաղաքաշինության վարչության
ավագ մասնագետ
Հեռ. 077 13 97 37